

Աստուած իմ սէ քանի՛ հարուստք յառազատս
 Հեծեն ընդ մահ սիրեցերոյ՛ չարարատս .
 Որքանի՛ մարք ըզմիամորն սղան
 Որոյ վառեալ այգուն՝ ՚ի գեղ կտրմերթեան՝
 Ի հրազենուց որտապիր ՚ի բամբիւն
 Հարաւ նոք երկս ՚ի ազով՝ թամբաւ ՚ի յարիւն .
 Այսպէս ծաղկուսք աստղափրթիթ կիտրունոյն
 Թօթափելով մերկեն ըզնա ՚ի գեղուն .
 Զի միւնաբեր սառնամանիք սատկաշունչ
 Թափի Հիւսիսէն փոթորկեցան մեծամառունչ .
 Տերք կաս ՚ի քուն Տէր մեր Տէր ,
 Ունչս առնեն քեզ դառն յեպեր :

Իսկ մինչ այսպէս գահք պետութիւնք ստանին .
 Մայրիք բարձուսք կործան յերկիր տապալին ,
 Յով հաստեցուսք խարխոս յուսոյ անվիկանդ՝
 Մըրրեկամուք յովիկանուս այս յարգանդ ,
 Թէ ոչ՝ ՚ի Քեղ Հայր դու որոց անտերունչ ,
 Ո զժշուառին լուսն հառաչ լալամուունչ :

Իրրու զեղէգ նրկնահասակ յանտառի .
 Զոր ՚ի գարուց հետէ տնկեաց աջք արի ,
 Մինչ յարիցէ ուժգին հողմ՝
 Մերթ յայս մերթ յայն հակեալ կողմ .
 Ընդ երեկոյս յողորմ բեկորս յաղթ մայրեաց՝
 Մէք ճօճնոցուք ճակատ փաղիուն լուսողեաց ,
 Աւերածոյն եղեալ վեհայ բքնութեան
 Եւ յորգարուղն յաւերթ գըթոյդ աստուածեան :

Որչէք եմք Տէր լաւնից ,
 Նստեալք հովիտ որդալից ,
 Ըսպառեցան ոգիք մեր
 Ի յարհաւրացս անբմբեր ,
 Տերք կաս ՚ի քուն Տէր մեր Տէր ,
 Ո՛հ կորնչեմք դառն յեպեր :

1877
 Յունիս 20

Աւետի (1) Կարապէտեան
 Կ . Պուշեշի
 Աւս . Ժառ . Վարժարանի :

(1) Սոյն աշակերտը Վարժարանի ներկայ տար-
 ւոյ հարցաքննութեան՝ իւր ընդհանուր և վերջա-
 կան քննութիւնը տուաւ ամենայն յաջողակութեամբ
 և իբրև փորձ Հայկաբանութեան գրած է այս քեր-
 թուածը, որոյ նիւթը քննիչք նշանակեցին :



Տարեկան հարցաքննութիւնք և Պարգևատրա-
 խութեան հանդէս Ժառ . Վարժարանի Ս .
 Արտոնոյս :

Տարեկան հարցաքննութիւնք Ժառ .
 Վարժարանի Յունիսար 17-27 տեղի ու-
 նեցան , ամեն օր ժամը 4 Էն մինչեւ 8
 ՚ի ներկայութեան Ամեն . Ս . Պատրի-
 սարք Հօր , Տնօ . Թողովոյ Գերա . Ան-
 դամոց և այլ եկեղեցական և աշխար-
 հական ուսումնասէր անձանց :

Հարկ չեմք համարեր մանրամասն
 գրել հարցաքննութեան աւարկաներուն
 և ուսանողաց պատասխանատուութեանց
 մասին , այլ կը բաւականա-
 նամք միայն , ինչպէս ամեն տարի , Սի-
 ծնի վերջը դնել աշակերտաց տարեկան
 աշխատասիրութեան և հարցաքննա-
 կան պատասխանատուութեան միջին
 արժէից , վարուց և մրցանակաց ցուցալ
 կը , յորմէ կը յուսամք թէ հարցասէր
 աղգայինք կարող են իրենց ցանկացած
 տեղեկութիւններն քաղել :

Իսկ պարգեւաբաշխութեան հան-
 դէսը կատարուեցաւ Ս . Վարդանանց
 անմահ յիշատակի տօնի օրը , ամսոյս
 Յին : Հանդիսին մէջ կարգացուած ճա-
 ուերէն հետեւեալը արժան կը դատուիմք
 սաս դնել :

ԱՄԵՆԱՊՍԻԻ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԵՒ ԳԵՐՅԱՐԳՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Ձեր պատկառելի համախմբու-
 թիւնը կը թելադրէ զիս այս ամբիւ-
 նին վերայ բարձրանալ և մի քանի խօսք
 արտասանել Աղգային հանդիսից եւ
 սրբոց Վարդանանց նահատակութեան
 վերայ , ուստի Ձեր յօժար ունկնդրու-
 թիւնը և ներողամտութիւնը կը հայ-
 ցեմ :

Եթէ առ վայր մի ակնարկ մի ձը-
գեմք մարդկային ազգի տարեգրու-
թեանց վերայ, թափանցեմք նոցա գոր-
ծոց և արարմանց խորը՝ յայտ յանգի-
ման պիտի տեսնեմք որ ամեն ազգ և
ամեն տէրութիւն ունեցած է ընտիր
ընտիր նահատակներ, քաջտիրոջ եւ
աննկուն աստղաններ, հայրենասէր
և անձնուէր մարտիիներ, որք ՚ի սէր
հայրենեաց, ՚ի սէր կրօնի կամակար զի-
մած են ՚ի բանտ, ՚ի կախազան և ՚ի
մահ, վասն որոց նոցա յիշատակը պատ-
ուելու եւ ազգաց սերունդի սրտին
մէջ անջնջ պահպանելու համար սահ-
մանուած են աղբային տօնախմբու-
թիւններ, սոհամուտած են զանազան
հանդէսներ յորում առ հասարակ, արք
և կանայք, ծերունիք և մանկուիք, ե-
րկոտասորգք եւ կուսանք ՚ի մի վայր
գումարուելով կ'ըմայլին ՚ի մի շունչ և
՚ի հոգի այն վէհազանց անձնազոհու-
թեան վերայ, կը հիանան նոցա եռան-
դուն աղբասիրութեան վերայ, եւ
կ'ուխսնեն սրտով և անկեղծ զգացմամբ
նմանող լինիլ նոցա գործոց և օրինա-
կին: Այս վսեմ նպատակաւ հաստա-
տուած էին Յունաց ողիմպիական խա-
ղերն և Հռովմայեցոց թատրերգու-
թիւններն, սրոց մէջ ունայն խրախճա-
նութիւններ չէին կատարուէր, այլ կը
վստէին և կարծարքէին մեծամեծաց
և փարանց սրտին մէջ հայրենասիրու-
թեան և ազգասիրութեան փսեմ եւ
անչլիանելի հուրն, որպէս զի ՚ի պա-
տահել հարկին դուրս բանկեցնեն ըս-
քանչելի կերպով եւ յայանսբարբառ
քարոզին իրենց սրտի և հաշւոց մե-
ծութիւնը: Այս պատճառաւ հան-
դէսներն այնչափ նուիրական էին որ
մերթ ընդ մերթ նայն իսկ հիւպատոս-
ներն, իշխաններն և վեհապանձ դա-
հախաններն Ապիտոլոնի վերայէն ճա-
սեր կ'արտասանէին ՚ի լսելիս ժողովը-

դեան որով կը յուզէին ամենքը: Եթէ
չեմք սխալիք, այս իսկ էր պատճառն որ
հայրենասիրութիւնը նոցա միակ ձիրքն
և էական յատկանիշն դարձած էր, ու-
րով ՚ի մի շունչ և ՚ի հոգի միշտ ՚ի սէր
հայրենեաց կը պարզէին կուրծքերնին
թնամեաց սրերուն և նետերուն, կար-
համարէին նոցա վատասրտութիւնը, կը
կանգնէին ամբարտակ անկործանելի
ընդդէմ երկպառակութեան և կը յա-
րուցանէին իւրեանց ծոցէն բիւրաւոր
անձնուէր դիւցազուններ, սրոց քա-
ջասրտութեան վերայ կը զարմանար
համօրէն աշխարհ և կը սասանէին մի-
ահեծան պետութիւնք:

Հայոց ազգն եւս քաջ ճանաչելով
ազգային հանգիսից բազմադիմի օ-
գուաներն՝ ՚ի վաղուց անտի ընդունած
է զայն իրեն համար իբրեւ առաջին
և գլխաւոր պարտակատարութիւն, ու-
րով ամ ըստ ամէ հրձուելով կը տօնէ
հայրենիքը պաշտպանող քաջերն, հօ-
տը ինամոզ հովիւներն, կը վերանորոգէ
նոցա անմոռաց յիշատակը, անդ ազար
կը զրուտտէ իւր անձնազոհ և կամա-
ւոր նահատակներն, Այս ազգաշէն
նպատակաւ է որ կը կատարէ ներկայ
հանդէսն ՚ի յիշատակ սրբոց Վարդա-
նանց անմահ գործոց, կը կատարէ վա-
յերապէս՝ ըստ սրժանւոյն պատուե-
լով զանոնք իբրեւ զօրավիպ հայրենեաց
և իբրեւ աստղան եկեղեցւոյ: Այս է
բոլոր որդւոց Հայրազանց պարտաւո-
րութիւնը և այս իսկ է նշան երախտա-
գիտութեան, վասն զի Արդանանք
կենօք և մահուամբ փրկութեան աս-
պար եւ ազատութեան ճանապարհ
հանգիսացան մեզ, իբրեանց սիրա-
գործութիւնը առաւել յարգ ըստա-
ցաւ այնպիսի նեղ և անձուկ ժամա-
նակի մը մէջ կատարուելուն համար:
Որովհետեւ այն ինչ Արշակունեան խա-
խուլ և կիստիրոջան թագաւորութիւ-

նր յետ ընդ երկոր հոգեվարութեան
 իւր վերջին շունջն արձակեց, արդէն
 սասանեան սիգախրոստ և չարասիրտ
 տիրապետներն սկսած էին գոտալով
 յսուեր և յապոկանութիւն գարձու-
 ցանել զՀոյաստան. քանզել, կործա-
 նել քողոքներն գիւղերն և տուններն,
 տապալել, պղծել, հրձիգ առնել զե-
 կեղեցիս: Հայաստանի առոյգ զուակ-
 ները բազմութեամբ պարտկական ան-
 յազ սրոյն ճարակ կը լինէին. միակ
 տրտատուքն և սաղմոսաց մրմունջներն
 էին վտարանդի ժողովրդեան միխթա-
 րութիւնը. չը կար կարեկցութիւն և
 չը կար գթութիւն: Քրդանաց և վապե-
 կութեանց մէջ սնուած մատաղ ման-
 կունքն և նորասի հարսուները խոտա-
 բուռ կը կերակրուէին. բաց ընդ նը-
 ժին ունէին ակնկալութիւն, ունէին յոյս
 փրկութեան՝ այն է Աստուծոյ անբաւ-
 գթութիւնը ՚ի կորեկցութիւն շորձել:
 Հեծեծանաց և աղօթից ձայները ժա-
 մանեցին բարձրէրջն Աթուր. հարկ էր
 որ Աստուած Մասեաց բարձուերքն
 փանչէր Հայաստանի նոր Մովսէսը եւ
 արգարեւ եկաւ, հասաւ Հայաստանի
 ազատութեան վայրկեանը, ծագեցաւ
 Հայոց փրկութեան պաղարջուն Արու-
 սեակը, ծագեցաւ Մամիկոնեան տա-
 նէն և առաջնորդեց անոնց անմահից
 կայանը: Տեսաւ նա իւր աղբին Յբիպ-
 տական նոր գերութիւնը, տեսաւ նոր
 Փորաւանին ամպարիչա խառութիւն-
 ները, տեսաւ հայրենեաց աւերմունք-
 ներն և ժողովրդեան թլուառութիւնը,
 նախարարաց երկպառակութիւնները,
 զօրականաց լքումը, կանանց ճիւղ,
 մանկանց կականումն, երկտատարգաց
 թուրութիւնը և ձերուներեաց հառա-
 չանքները — տեսաւ այս ամենը, սիրտը
 յուզեցաւ, աղիքները դալարեցան,
 հպատակեցաւ Աստուածային կոչման
 փութաց, վերստին վառեց Հայոց առը-

մականաց սրտին մէջ հայրենասիրու-
 թեան և վրէժխնդրութեան աւելաց-
 ծեալ հուրն և ոգեւորեց զանոնք ազ-
 դու պերճասուութեամբ, խախու-
 սեց և խրախուսեցաւ. բարձրացոյց
 Մասիսի խոնարհած գլուխը, վերա-
 կանգնեց Հայոց անկեալ տունը ինքնին
 հիմն հանգիսանալով, ամուլեցոյց ու-
 բայեալներն և բարձրացոյց իւր համ-
 հարդից պատիւն: Այս ամենը ճէին
 ամբերնոր Փարաւանի բարացեալ սիր-
 տը, պէտք էր կոտորիչ հրեշտակ մի,
 որ անդրանկաճախ ստտակմամբ սա-
 սանեցնէր սասանեաց սիրտն ու հոգին,
 Վարդան ինքն եղաւ այդ հրեշտակը,
 հանգոյն ճախրապաղսց արձւոյ իւր քա-
 ջերով խոյսցաւ պատերազմի դաշտն,
 Տղմուտ գետոյ ափունքն, անգ յար-
 դարեց զամենեւեան ըստ կորզի և
 տակաւին մարտը չըսկսած զօրք և զը-
 բականք վառեցան հոգւով և երկնա-
 լոր նահատակութեան սիրով և ազա-
 զակեցին միաբարբառ «Հաւասարեւ-
 ցի մահ մեր ընդ մահ արդարոյն եւ
 հեղումն արեան մերոյ ընդ արիւն Ս.
 մարտիրոսացն և հաճեցի Աստուած
 ՚ի կամուտը պատարագս մեր, մի տա-
 ցէ զեկեղեցի իւր ՚ի ձեռս հեթանո-
 սաց»: Արիաբար ճակատեցոյն ընդ-
 դէմանօրինաց աներկիւզ քաջութեամբ,
 դիմադրուեցին նոցա խառնիճաղանձ
 բազմութիւնը, թէպէտ շունէին պսշու-
 պան, թէպէտ շունէին թագաւոր բաց
 յօրինայն Աստուծոյ, հարին, կոտո-
 բեցին, ջարդեցին քաջաբար, ցրուե-
 ցին, ջախջախեցին մագականաց վէս-
 զլուխը, խոնարհեցուցին նոցս ամ
 բարտաւանութիւնը և այն ինչ հասան
 իրենց նպատակին, սաւառնաթեւ վե-
 բապաղան յերկրէ յերկինս՝ առ սան հար-
 կանելով աչս սրհի զաղիւր և վայրաբարչ
 հրապուրանքները: Իւրեանց բոտրա-
 յին արեամբ պսակեցին զեկեղեցին Քը-

րիստոսի և ինքեանք պատկեցան ՚ի Քրիստոսե , իւրեանց մահուամբ ազատութեան նեցուկ եղան ազգութեան և եկեղեցւոյ եւ նոցա շնորհիւ է որ ցարգ կանգունեալ հայ Հայութիւնն :

Ահա այս տեղ կ'երեւի Ս . Վարդանանց սիրագործութիւնը , փառքը և պարծանքը . այս տեղ կ'երեւի աւնոց վեհանաձևութիւնը , հայրենասիրութիւնը և կրօնասիրութիւնը : Առ ի՛նչ արդեօք թողին նոքա իրենց կանայքը , որդիքը , գերգաստանը , հայրենիքը և ՚ի մահ ընթացան . սով կը հարկադրէր զանոնք . սով կը ստիպէր — հայրենասիրութիւնը եւ կրօնասիրութեան սուրբ եւ արգար նախանձը , որ սաստիկ բորբոքած էր աւնոց մէջ . — Զոհեցին երկրաւոր թագաւորին սէրն՝ երկնաւորի սիրոյն , երկրաւորին պարգեւները՝ երկնաւորին պարգեւաց , եւ թէպէտ մեռան մարմնով , բայց ազատ մնացին հոգեով և իւրեանց անունը անմահ թողին երկրի վերայ , վասն որոյ քանի որ կ'ապրին , լոյս կը տեսնեն Հայկաց որդիներն չք պիտի մոռանան նոցա յիշատակը :

Բայց արդեօք հաճի է ըսել , Յարգելի հանգիստականք , որ լոկ տոնախումբութիւնը չ'ունի արժէք , չ'ունի օգուտ եթէ չը ջանամք գործով եւս աւնոց նմանելու , վասն զի նմանողութեան մէջ է իսկոսկան քաջութիւնը և հարազատ որդիութիւնը : Նորա այն պիտի արհաւիրայից և անձուկ ժամանակ մի անառիկ և հատուտուն աշտարակաց նման անխախտ և անսասան մնացին իրենց հաւատոյ եւ ազգութեան մէջ . բարբարոսութեան տեղատարափ անձրեւները և հալածանոց կարկուտները չը կարացին խախտել անոնց խորամտ հիմն , ապալել անոնց հաւատը : Արդ պէ՞տք է ներկայ սերունդը , որ նախնեաց մի փոքրիկ մը

նացորդն է , խաղառ մտանալով աւնոց քաջութիւնը և կրօնասիրութիւնը իւր անձնական կրից գերի եղած աւնոց հալածանաց , աւնոց հողմոյ հուպ ընդ հուպ կործանի . հաճի է որ փոխանակ իւր վէճքերն դարմանելու : փոխանակ՝ օտարաց կրօնամոլութեան դէմ մաքառելու , կամու նոցա կորուտաբեր գիրկն անկանի : Եթէ Պարսկական հալածանքները , Յունական դարաւոր նենգութիւնները , Հագարական հուրն ու սուրը , Հիւսիսականաց բարբարոս արշաւանքներն եւ Ղաախնաց ազգակուլ հետամուտութիւններն չը կարացին յաղթել Հայութեան , ջնջել նորա անունն ու յիշատակը , աւանդ կը հասկածիմ որ անտարբերութիւնը պիտի ընէ ինչ որ դարերը չը կարացին ընել :

Ուրեմն պէ՞տք է անտարբերութեան յաղթեմք ազգասիրութեամբ , խաւարին դէմ կռուիմք լուսով և գիտութեամբ , ջանամք նմանող լինիլ մեր քաջ դիւցազանց գործով և հոգեով . ջանամք մանել լուսաւորեալ ազգաց կարգը , որպէս զի սիրելի հանգիստանամք յաչս մարգկութեան և Աստուծոյ :

1877 Մանուկ Զգօնեան
Փետրվար 3 Զէյթունցի
Ալա . Ժառ . Վարժարանի :

